ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 02.09.2020թ.),

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 02.09.2020թ.),

Անի համայնքապետարանի ներկայացուցիչներ

Կ. Նալբանդյանի (լիազորագիր տրված՝ 10.09.2020թ.),

Կ. Գրիգորյանի (լիազորագիր տրված՝ 10.09.2020թ.),

Ս. Չարչօղլյանի (լիազորագիր տրված՝ 10.09.2020թ.),

քննելով Անի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Սառնաղբյուր, Բագրավան, Լանջիկ, Հայկաձոր, Ջրափի, Գուսանագյուղ, Ձիթհանքով, Քարաբերդ բնակավայրերի, Մարալիկ քաղաքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում և 20 ԿՎՏ հզորությամբ արևային կայանի տեղադրման նպատակով հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից 01.09.2020թ. ներկայացված (02.09.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/89 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 01.09.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար Շիրակավան, Սառնաղբյուր, Բագրավան, Լանջիկ, Հայկաձոր, Ջրափի, Գուանագյուղ, Ձիթհանքով, Քարաբերդ նակավայրերի,Մարալիկ քաղաքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման և 20ԿՎ հզորությամբ արևային կայանի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Վերը նշված Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգով գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4 ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մերժել «Ույուտ Սետր» ՍՊԸ-ի և «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտերը:

<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 43-րդ կետի 1 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:...: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

ա) Ինչպես արդեն հայտնել ենք ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար հայտարարվել է ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի կողմից «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4 ենթակետը:

Կարգի 40-րդ կետի 4 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Մինչդեռ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ուսումնասիրությունը վկայում է, որ այն լիովին համապատասխանում է Հրավերով սահմանված պահանջներին: Այս դեպքում անհասկանալի է դառնում, թե գնային առաջարկում ինչպիսի անհամապատասխանություններ են արձանագրվել:

Եթե խնդիրը գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է գնային առաջարկին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում (ընդամենը ենթադրություն է), ապա այդ փաստաթղթում անհամապատասխանություններ լինելու պարագայում նույնիսկ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի ուժով պետք է տրամադրվեր արձանագրված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն, քանի որ ծավալաթերթ-նախահաշվը չի կարող դիտարկվել որպես գնային առաջարկ, որը շտկման ոչ ենթակա փաստաթուղթ է, քանի որ ծավալաթերթ-նախահաշվը ենթակա է շտկման:

բ) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության մեջ մանրամասն չեն նկարագրվել արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը, այլ ընդամենը վերացական նշվել է, որ ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4 ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մերժում է «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտերը:

Արդյունքում Բողոքաբերի համար անհասկանալի է և ոչ որոշակի նախ, որ փաստաթղթում (գնային առաջարկում, թե ծավալաթերթ-նախահաշվում) են արձանագրվել անհապատասխանությունները, ինչպիսին են դրանք, հրավերի կոնկրետ որ պահանջն է խախտվել:

Արդյունքում նման ոչ հիմնավորված, չմանրամասնված հայտը մերժելու մասին որոշման արդյունքում խախտվել են Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի և 43-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

Վերոհիշյալի արդյունքում ակնհայտորեն խախտվել է նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները):

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է.

1.Պարտավորեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2.Պարտավորեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների նիստ հրավիրելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.09.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը, միաժամանակ հայտնել են, որ բողոքով ներկայացված երկրորդ պահանջից, այն է՝ պարտավորեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ գների նվազեցման շուրջ բանակցությունների նոր նիստ հրավիրելու վերաբերյալ, հրաժարվում են, և թողնում են միայն բողոքով ներկայացված առաջին պահանջը՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. <u>Անի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

Անի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի կողմից ՇՄԱՀ-ՀԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի բողոքարկման գործընթացը այս պահին կասեցված է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ կետով, խնդրում ենք հանել գործընթացի կասեցումը և թույլ տալ շարունակելու գնման ընթացակարգը, քանի որ այն ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրով իրականացվող գնում է և պետք է ավարտվի մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Գնման գործընթացն իր մեջ ներառում է թվով 10 սահմանամերձ և լեռնային բնակավայրերի բնակչության հանրային շահը և բնակչության գիշերային անվտանգությունը:

Հաշվի առնելով այն, որ ծրագիրը իրականացվում է ՀՀ հյուսիսային տարածքում, բնակլիմայական պայմանները և ձմեռամուտը վաղ է լինում, ուստի շինարարական աշխատանքների ուշ իրականացումը կազդի շինարարական աշխատանքների որակի և ժամկետների վրա:

Համայնքի կողմից մերժման հիմքեր են հանդիսացել.

1. Հրավերով և օրենքով սահմանված է եղել, որ եթե հայտը ներկայացնում է գործակալը, հայտով պետք է ներկայացվի լիազորագիր, որը բացակայել է հայտում:
2. Հրավերի պահանջներով ծավալաթերթ-նախահաշիվը համարվել է գնային առաջարկի հավելված 2.1-ում, որը բացակայել է, փոխարենը ներկայացվել է կից ծավալաթերթ- նախահաշիվը, որում ներկայացված նախահաշիվային կշիռների գումարը տարբերություն է ունեցել 30 դրամի գնային առաջարկով ներկայացված գնի համեմատ: Չեն համապատասխանել նաև ներկայացված ձևի նկատմամբ կշիռների ներկայացված տոկոսները:

Բողոքում ներկայացված խտրականության վերաբերյալ հանձնաժողովին և պատվիրատուին չի ներկայացվել ծրարով կամ բանավոր բողոք խտրականության, ինչպես նաև գնման գործընթացի հետ անհամաձայնության վերաբերյալ:

Խնդրում ենք Ձեզ հրատապությունից ելնելով հարցին տալ դրական լուծում, հաշվի առնելով ծրագրի բացառիկությունը և համայնքային շահը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.09.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Անի համայնքապետարանը ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Սառնաղբյուր, Բագրավան, Լանջիկ, Հայկաձոր, Ջրափի, Գուսանագյուղ, Ձիթհանքով, Քարաբերդ բնակավայրերի, Մարալիկ քաղաքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում և 20 ԿՎՏ հզորությամբ արևային կայանի տեղադրման նպատակով հայտարարել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4 ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մերժել է «Ույուտ Սետր» ՍՊԸ-ի և «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտերը:

3. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջներին համապատասխան բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկեց գների նվազեցման բանակցություն, որի արդյունքում հայտարարեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղցրած և ընտրված մասնակիցներին:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գյումրու վերելակային տնտեսություն » ԲԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացված բողոքը՝ կից

նյութերով, ԳԲՔԱ-ՆԳ-2020/89 բողոքի շրջանակներում Անի համայնքապետարանի կողմից ներկայացված «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փաստաթղթերը և դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:**

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. ***պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Կարգի 43-րդ կետի 1 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:...: Ընդ որում***, <u>հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.</u>***

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) N 2.1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը:

Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>***, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից:

Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով....: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***<u>Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:</u>***

Այսպես՝ Անի համայնքապետարանը ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Սառնաղբյուր, Բագրավան, Լանջիկ, Հայկաձոր, Ջրափի, Գուսանագյուղ, Ձիթհանքով, Քարաբերդ բնակավայրերի, Մարալիկ քաղաքի փողոցային լուսավորության

ցանցի ընդլայնում և 20 ԿՎՏ հզորությամբ արևային կայանի տեղադրման նպատակով հայտարարել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4 ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մերժել է «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջներին համապատասխան բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկեց գների նվազեցման բանակցություն, որի արդյունքում հայտարարեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղցրած և ընտրված մասնակիցներին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գյումրու վերելակային տնտեսություն» ԲԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը, արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4 ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով մերժել է «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն գրությամբ, ինչպես նաև բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմքեր են հանդիսացել.

1. Հրավերով և օրենքով սահմանված է եղել, որ եթե հայտը ներկայացնում է գործակալը, հայտով պետք է ներկայացվի լիազորագիր, որը բացակայել է հայտում:

2. Հրավերի պահանջներով ծավալաթերթ-նախահաշիվը համարվել է գնային առաջարկի հավելված 2.1-ում, որը բացակայել է, փոխարենը ներկայացվել է կից

ծավալաթերթ- նախահաշիվը, որում ներկայացված նախահաշիվային կշիռների գումարը տարբերություն է ունեցել 30 դրամի գնային առաջարկով ներկայացված գնի համեմատ: Չեն համապատասխանել նաև ներկայացված ձևի նկատմամբ կշիռների ներկայացված տոկոսները:

Այպիսով՝ անդրադառնալով Պատվիրատուի կողմից գրությամբ վկայակոչված «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտի մերժման առաջին հիմքին, այն է՝ Հրավերով և օրենքով սահմանված է եղել, որ եթե հայտը ներկայացնում է գործակալը, հայտով պետք է ներկայացվի լիազորագիր, որը բացակայել է հայտում, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: ***<u>Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից բողոքի քննության շրջանակներում տրամադրված փաստաթղթերը, արձանագրում եմ՝ գործում առկա է 24.08.2020թ. Ընկերության տնօրենի կողմից Կարեն Արիստակեսյանին տրված լիազորագիր՝ ԳՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման հայտի փաստաթղթերը հանձնելու համար:

Ուստի գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը այն հիմքով, որ առկա չէ լիազորագիր, որով վերապահված կլինի գործակալին իրավունք փաստացիորեն միայն հանձնելու հայտը, գործել է վերը նշված իրավական նորմի խախտմամբ, քանի որ նշված իրավական նորմով հստակ սահմանվում է, որ գործակալի կողմից հայտը ստորագրելու և ներկայացնելու դեպքում է հայտով ներկայացվում վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը: Ընդ որում՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը,

ստորագրված են եղել Ընկերության տնօրենի կողմից, որի փաստը բողոքի քննության նիստի ընթացքում հավաստել է նաև Պատվիրատուն:

Ինչ վերաբերում է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտի մերժման երկրորդ հիմքին, այն է՝ Հրավերի պահանջներով ծավալաթերթ-նախահաշիվը համարվել է գնային առաջարկի հավելված 2.1-ում, որը բացակայել է, փոխարենը ներկայացվել է կից ծավալաթերթ-նախահաշիվը, որում ներկայացված նախահաշիվային կշիռների գումարը 30 դրամի տարբերություն է ունեցել գնային առաջարկով ներկայացված գնի համեմատ, չեն համապատասխանել նաև ներկայացված ձևի նկատմամբ կշիռների ներկայացված տոկոսները, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:***

Մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար գտնում եմ, որ Պատվիրատուն, կիրառելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և մերժելով Ընկերության հայտը, գործել է կարգի նշված կետի խախտմամբ:

Միաժամանակ, ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից գրությամբ ներկայացված այն պնդմանը, որ Հրավերի պահանջներով ծավալաթերթ-նախահաշիվը համարվել է գնային առաջարկի հավելված 2.1-ում, որը բացակայել է, փոխարենը ներկայացվել է կից ծավալաթերթ-նախահաշիվը, որում ներկայացված նախահաշիվային կշիռների գումարը 30 դրամի տարբերություն է ունեցել գնային առաջարկով ներկայացված գնի համեմատ, չեն համապատասխանել նաև ներկայացված ձևի նկատմամբ կշիռների ներկայացված տոկոսները, որը հիմք է հանդիսացել վերջինիս հայտը Կարգի 40-րդ կետի 4 ենթակետով մերժելու համար, ապա սույն մասով արձանագրում եմ, որ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ

աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***:

Այսպես՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ, ենթակա են շտկման, միաժամանակ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է շտկման անթույլատրելիություն՝ որոշ բացառություններով, միայն գնային առաջարկի մասով, այսինքն՝ մնացած բոլոր դեպքերում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման պահանջը:

Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ գտնում եմ, որ վերջինիս կողմից թույլ է տրվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, Կարգի 41-րդ, 42-րդ և 43-րդ կետերով և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում

արձանագրելով անհամապատասխանություն՝ պետք է կիրառվեր Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը:

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ ***հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը,*** մինչդեռ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովը, 24.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի 1-ին ենթակետով մերժելով Ընկերության հայտը, նշված արձանագրությամբ մանրամասն չի նկարագրել վերջինիս հայտի մերժման հիմք հանդիսացած անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում գտնում եմ, որ պետք է դադարեցնել «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտի մերժման մասին որոշումը և վերջինիս նկատմամբ կիրառել կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի կիրառման արդյունքում Ընկերության հայտը բավարար գնահատելու պայմաններում պետք է կրկին Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն վարի միաժամանակյա բանակցություններ՝ հնարավորություն տալով Ընկերությանը մասնակցելու բանակցություններին, որից վերջինս զրկվել էր հայտերի բացման նիստում հայտը մերժված լինելու հիմքով պայմանավորված:

Այսպիսով՝ հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները՝ գտնում եմ, որ Օրենքի խախտմամբ իրականացված գործողությունները, որի արդյունքում խախտվել է ընթացակարգի բնականոն ընթացքը, չեն կարող լինել իրավաչափ և «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Այսպիսով՝ գնումների ՀՀ օրենսդրությամբ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից

խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Վերը նշված հիմքերով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից 01.09.2020թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**